ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВОХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА
CJSC NATIONAL CENTER OF ONCOLOGY named after V. A. FANARJIAN

ՈՒԱԿ NCO

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ.76
ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76
76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

№ 765
«22» 07 2024թ

Հեռ. (+374 10) 20-94-02

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Նարեկ Մանուկյանի

«Մ.Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի միջև 14.03.2024թ կնքվել են ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/42-3 ծածկագրով գրենական պիտույքների, 11.03.2024թ-ին ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/44-10 ծածկագրով տնտեսական ապրանքների, 11.06.2024թ-ին ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/67-3 ծածկագրով համակարգչային սարքավորումների մատակարարման պայմանագրերը:

Հիմք ընդունելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության 04.07.2024թ N Ե/1618-24 գրությունը, ինչպես նաև առաջնորդվելով կնքված պայմանագրի 8.3 կետով, այն է. «Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն

ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար»: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն առաջարկել է մասնակի լուծել ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/42-3, ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/44-10, ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/67-3 ծածկագրերով պայմանագրերը: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով 2024 թվականի հունիսի 12-ի N 736 գրությամբ «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ն հայտով նշված tciatcan-nerker@mail.ru էլեկտրոնային հասցեին ծանուցվել է N լուծել ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/42-3, ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/44-10, ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/67-3 ծածկագրով պայմանագրերի միակողմանի լուծման մասին և վերջինիս մասին հայտարարությունը 2024 թվականի հունիսի 12-ին հրապարակվել է https://gnumner.minfin.am/ կայքում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ուսումնասիրելով ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից ներկայացված գրությունը և հաշվի առնելով այն փաստը, որ «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ -

ի կողմից գրությամբ սահմանված ժամկետներում չի իրականացվել պայմանագրերի կատարման և որակավորման ապահովումների վճարումը, «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ի ներքոնշյալ տվյալները ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, «Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին՝ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
			գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը պայմանագիրը միակողմանի լուծելու եղանակով	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
«Մ.Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ	02890282	ք. Երևան, Դեղատուն փ. 10$_2$, բն. 6	ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4 N526-ն որոշման 119-րդ կետի 2-րդ ենթակետ			22.07.204թ. ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/42-3, ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/44-10, ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/67-3

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՏՆՕՐԵՆԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՍՈՍԱՄ ՋԻԼԱՎՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների բաժնի ղեկավար
Հեռ. /010/ 20 50 50 /102